Առաջավոր փորձի փոխանակություն

ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈՒԼՀԱԿՈՒՀԻ [Տ. Հ. ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ն. ՇԱՀՆԱԶԱՐՈՎԱ ԵՎ Ի. ԵՂԻԵՎԱ
Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատ

Սոցիալիստական մրցության մեջ մեծ հաջողություններ է հասել Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի № 2 գործվածքային ցեխի առաջավոր ջուլհակուհի Տիրուհի Հունանյանը։



Նկ. 1. Տ. Հունանյանը աշխատելիս։

Աշխատելով № 14 բրիգադայում, նա սպասարկում է ՉԳՍՊ—50 սիստեմի երկու հաստոց, որոնք պատրաստում են բնական (արտիկուլ 1109) և արհեստական (արտիկուլ 3104) կրեպժորժետներ։

Ջուլհակուհի Հունանյանը ճշտորեն գատարում է աշխատանքի պրիոմները և ռացիոնալ կերպով օգտագործում աշխատանքային ժամանակը։ Հաստոցների անխափան աշխատանքին հետևում է վարպետի օգնական Ե. Ասլանյանը։ Սարքավորման սահուն ընթացքի և աշխատանքի ճիշտ կազմակերպման շնորհիվ 1958 թ. առաջին եռամսյակում Տ. Հունանյանը հասավ լավ արդյունքների։ Նա նորման կատարեց 171,1%-ով և նորմայից դուրս տվեց 1387 մ գործվածք։ Առաջին տեսակի արհեստական կրեպժորժետի արտադրանքի տոկոսը, պլանով նախատեսված 50%-ի փոխարեն, նա կատարեց 100%-ով, իսկ բնական կրեպժորժետինը՝ 92,6%-ով, պլանով նախատեսված 30%-ի փոխարեն։ 1109 արտիկուլի գծով սարքավորման արտադրողականությունը նա բարձրացրել է մինչև 2,55 մ մեկ հաստոց-ժամի համար (պլանով նախատեսված 1,98 մ դիմաց), իսկ 3104 արտիկուլի գծով յուրաքանչյուր հաստոց-ժամի արտադրողականությունը՝ 3,48 մ (ըստ պլանի 2,43 մ է)։

Ընդունելով հերթափոխը, Տ. Հունանյանը խնամքով զննում ու ստուգում է հաստոցները. երկու հաստոցներում թեղանի վերջանալուց ու մաքոքները փոխելուց խուսափելու համար, դրանք սկսում է հերթականորեն աշխատեցնել։ Հաստոցները գործարկելուց հետո, Հունանյանը լցնում է պահեստային մաքոքները և դրանք դարսում կրծքագլանի վրա։ Օգտագործելով սպասարկման պահպանական մեթոդը, նա հետևում է այն բանին, որ թեղանի վերջանալու պատճառով հաստոցն ինքնիրեն կանգ չառնի։

Միայն դրա շնորհիվ նա տնտեսում է 17,4 հաստոց-րոպե և հերթափոխի ընթացքում լրացուցիչ կերպով արտադրում է մոտավորապես 0,9 մ գործվածք։

Տ. Հունանյանի մոտ հաստոցների պարապուրդները գրեթե չեն համընկնում։ Նրա ամեն մի շարժումը հաշված և մտածված է։ Երբ հաստոցները նորմալ կերպով են աշխատում, նա



Նկ. 2.



Նկ. 3.

մաքրում և կարգավորում է հենքերը, թեղաններ-ը, կանխում է գործվածքի արատները, վերացնում հենքերի վրա եղած խոշոր հանգույցները, գնդիկները, կեղտոտումները։ Աշխատանքի այդպիսի կազմակերպումը ջուլհակուհուն օգնում է հաստոցներն օգտագործել լրիվ կարողությամբ, գերակատարել արտադրական նորմաները և թողարկել գերազանց որակի արտադրանք։

Տ. ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Պահեստային մաքոքը թեզանով լցնելը։ Ջուլհակուհին մաքոքը վերցնում է ձախ ձեռքով, թելանցքի կողմը շրջում է դեպի իրեն, ձողիկի ծայրը պահում ներքև, ձախ ձեռքի միջամատով այն դուրս հրում (նկ. 2), իսկ աջ ձեռքով հա-



Նկ. 4.



Նկ. 5.

նում մասրան և այն դնում տափանի վրա։ Այնուհետև նույն ձեռքով վերցնում է լիքը մասրան և մինչև վերջ հագցնում ձողիկին (նկ. 3), աջ ձեռքով գտնում է մասրայի վրա թելի ծայրը, փաթաթում է 4—5 գալար, բաց է թողնում ձողիկը և թելը դնում մաքոքի թելանցքի մեջ։ Դրանից հետո նույն ձեռքով վերցնում է կեռիկը, իսկ ձախով սեղմում կոնդուկտորը և բարձրացնում մեքենան (նկ. 4)։ Կեռիկը ձեռքով անցկացնում է

թելանցքների միջով, թելը ամրացնում է և այն հրում դրանց մեջ։ Եթե փոխարինվող մասրաների վրա թել է մնացել, որի ծայրը գտնվում է թելանցքի մեջ, ապա ջուլհակուհին բարձրացնում է ձողիկը, աջ ձեռքով հանում է մասրան, այն փոխարինում է լիքը մասրայով, թելը ոլորելով



Նկ. 6.

միացնում է թելանցքի մեջ մնացած թելին, անցկացնում վերին թելանցքի մեջ և մաքոքը դնում մաքոքատեղը։ Մաքոքի լցումը կատարվում է 9,8 վրկ-ում, նորմայով նախատեսված 15 վրկ փոխարեն։

Մաքոքի փոխարինումը թեզանի վերջանալուց հետո, կանխելով թելի դուրս ընկնելը։ Երբ մասրայի վրա մնում է 3—4 գալար թեզան, ջուլհակուհին աջ ձեռքով սեղմում է կողմատարը, իսկ ձախով բատանը քաշում սանդերքամանից և դնում այնպիսի վիճակում, որ երախը բաց մնա (նկ. 5)։ Այդ նույն ձեռքով բռնում է քշոցը և թեթև շարժումով մաքոքատուփից դեպի իրեն է

Նկ. 7.

հրում մաքոքը (նկ. 6), այնուհետև աջ ձեռքով մաքոքը վերցնում է մաքոքատեղից և տեղավորում մաքոքատուփի մեջ (նկ. 7)։ Նույն ձեռքով գործարկում է հաստոցը, իսկ ձախով օգնում է բատանի շարժմանը։ Մաքոքի փոխարինումը կատարվում է 3 վրկ-ում, նորմայով նախատեսված 10 վրկ փոխարեն։